

370.1

C-12

1 MAR 2010

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԻՏՈՂԿՈՄՍԻ  
ՄՈՅ ԴԱՍՏԻՇՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԼԽ. ՎԵՐԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵ. ՇԱԲԱԴ

ԻՆՉՊԵՍ ՊԵՏԲ Ե ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ  
3-8 ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ



370.1  
Զ-12

ԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
Յ Ե Ի Ե Վ ա Գ — 1928

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄՍԵՏ  
ՍՈՑ. ԴՍ.ՍՏԻՍ.ՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԼԽ. ՎՍՐԶՈՒԹՅՈՒՆ

Յ 70.1  
6-12

ՅԵ. ՇԱԲԱԴ

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե՛ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ  
3-8 ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ

05691  
1004



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՖԵՐԵՎԱԳ — 1928



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՁԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԳՐՔՈՒՅԿ № 1

Այս գրքույկի նպատակն է ծնողներին և  
ընտանեկան դաստիարակությամբ հետաքրքրվող-  
ներին ցուցվածքներ տալ հետևյալ յերկու խնդրի  
մասին. 1) ինչ է դաստիարակությունը և 2) յերբ  
պիտի սկսել այդ դաստիարակությունը:

Սովորաբար կարծում են, վոր յերեխայի  
դաստիարակությունն սկսվում է դպրոցում, վոր  
վերջինիս պարտականությունն է դաստիա-  
րակել նրան ինչպես հարկն է: Յերբ յերեխայից  
«բան չի դուրս գալիս», մեղադրում են դպրոցը.  
այս սխալ կարծիք է, յերեխայի դաստիարա-  
կությունն սկսվում է հենց ամենավաղ, ծնկե-  
րության շրջանից: Ահա այստեղ շատ մեծ դեր  
են խաղում թե ծնողները և թե յերեխայի հետ  
ապրողները: Մի գիտնական ասել է, վոր յեթե  
յերեխային մի ամսական դառնալուց հետո յենք  
ստում դաստիարակել, այդ դեպքում մենք ու-  
շացած ենք լինում:

Դաստիարակութունն սկսվում է մանկան  
կյանքի առաջին ուրերից.

Մանկան կյանքի հենց առաջին ուրերից մենք պետք է նրան դաստիարակենք: Այս դաստիարակել սասածը պիտի նկատի ունենանք և՛ հագցընելիս, և՛ կերակրելիս, և՛ ամեն բանում, ինչ վոր մենք նրա համար կամ նրա շուրջն անում ենք: Մեր լավ կամ վատ արածը մանկան վրա համապատասխան ազդեցություն է ունենում. հենց այս վաղ շրջանից նրա համար ամեն ինչ նշանակություն ունի, մի բան ավելի՛ մի հասակում, մի ուրիշ բան՝ այլ հասակում: Ամենապատասխանատու և կարևոր շրջանը հենց մինչ 8-10 տարեկան հասակն է. այդ ժամանակ է, վոր պիտի մտածել կանոնավոր դաստիարակության մասին:

Ծնողներից հաճախ լսում ենք՝ «ի՞նչ արած, սա հենց եսպես է ծնվել, բան չի դուրս գա սրանից», կամ թե՛ «չգիտեմ ում է քաշել եսքան անշնորհք»... Ապա մի հարցնենք ծնողներին, թե այդ յերեխան ի՞նչ միջավայրում է մեծացել, ի՞նչ է տեսել, ի՞նչ է լսել—և դուրս կգա, վոր ծնողները՝ նրան դեռ շատ փոքր համարելով, իսկի յել ուշադրություն չեն դարձրել նրա դաստիարակության վրա. «ի՞նչ կարելի չէ սրան սովորեցնել, վոչինչ չի հասկանում, դեռ վաղ է մտա-

ծել դաստիարակության մասին»: Ի՞նչ է տեսել ու լսել իր ծնվելու ուրից այդ «անշնորհք» ու «անպետք» անունն ստացող յերեխան. կոպտություն, հայհոյանք, ծեծ ու անմաքրություն: Վոչ նրա հագուստի ու անկողնի մաքրությունն են հետևել, վոչ ուտել-խմելուն, վոչ կարգ ու կանոնի սովորեցրել:

Յեթե բան է՝ քիչ են ծեծել, հայհոյանքը և՛ ս անպակաս է յեղել: Վոտքի յելած ուրից մի կտոր հաց կղնելին ձեռքը (ու՛նկորը՝ շաքարեղեն կամ գաթա), և ահա այդպես անխնամ մանուկը վազում էր բակը կամ նույնիսկ փողոց: Թե այնտեղ յերեխան ի՞նչ է լսում կամ տեսնում, ում հետ է և ի՞նչպես է խաղում—ծնողները իսկի յել չեցին անհանգստանում: «Հալա մի տանը վոր չի խանգարում, եղ էլ մեծ բան ա»:

Նման ծնողներն աչքաթող են անում մի հանգամանք, վոր հենց այդ վաղ մանկության շրջանումն է հեշտ փոքրիկին մի շարք լավ և կյանքի համար անհրաժեշտ սովորույթներ, ունակություններ պատվաստել: Փոքրիկը շատ մեծ հավատով է վերաբերվում իր ծնողներին, շարունակ հարցերով դիմում է նրանց և ոգնություն է սպասում թեև փոքր, բայց իր համար լուրջ գործերում: Բացի այդ վաղ մանկությունը առողջության տեսակետից էլ շատ պատասխա-

նատու շրջան է. այստեղ է, վոր ամուր հիմք պիտի դրվի մանկան առողջութեան համար, վոր հետագայում ել հեշտ լինի նրա կրթութունը առաջ տանել:

Ծնողները թող չկարծեն, թե իրենք պարտավոր չեն կամ անկարող են դաստիարակել իրենց յերեխաներին: Միևնույն է, ընտանեկան կյանքն ամեն դեպքում ել ազդում է յերեխայի վրա, դաստիարակում է նրան, և ծնողներին մնում է այդ կրթութունն ու ազդեցութունը լավ ուղիով տանել, վոր նրանից հետագայում մեր կյանքի համար պիտանի մարդ դուրս գա:

Ի՞նչ պիտի իմանալ մանկան օտս փոքր հասակից դաստիարակելու համար.

Նախքան դպրոց գնալը յերեխան իր նախադպրոցական տարիքն է ապրում: Ծնողները պիտի իմանան, վոր այս տարիքը փոքրիկի ուժեղ աճման շրջանն է, և ինչպես բույսը կամ կենդանին, այնպես ել յերեխան աճման շրջանում լավ սննդի, ջրի, ոդի և արևի ավելի մեծ կարիք ունի:

Զպետք է մոռանալ և այն, վոր մարդուս մանկութունն ավելի չերկար է տևում, քան կենդանիների մանկութունը, ուրեմն ծնողներն ավելի չերկար պիտի խնամեն չե ինչպիսին, քան

կենդանին իր ձագերին: Թույլ ու անոգնական է մանուկը լույս աշխարհ գալիս և աճման շրջանում վնասն քան է սովորում. ուտել, ման գալ, կանոնավոր շարժումներ կատարել, տեսնել, լսել, առարկաների հոտն առնել, մարդկանց հասկանալ, խոսել նրանց հետ: Յերեխան շրջապատված է այնքան մարդկանցով, կենդանիներով, այնքան իրեր է տեսնում նա, և այնքան բան է կատարվում նրա շուրջը, վոր հեշտ բան չի նրա համար իր թույլ ուժերով և թույլ խելքով այդքանը դիտել և բոլորին հարմարվել: Ծծկերութեան շրջանում շրջապատի կյանքը շատ ել ուժեղ չի ազդում մանկան վրա, բայց հենց վոր նա վտարի չե կանգնում, սկսում է ման գալ, այդտեղից ել սկսվում են դժվարութունները: Շուրջն աղմուկ է շարունակ. վառարանի չրթչրթոցը, մարդկանց և կենդանիների ձայները, ժամացույցի չիկչիկոցը, բացի այդ անթիվ ու անհամար մեծ առարկաներ, շատ անգամ դժվար ըմբռնելի, կամ ախորժելի, կամ անախորժ...

Աճման այս ծանր շրջանում մեծերը պիտի ոգնութեան գան մանկան, վոր նրա քաջն ել ավելանա, հասակն ել. մեծերը պիտի նպաստեն նրա զգայարանների (տեսողութեան, լսողութեան), ձեռքերի, վոտների և մարմնի զարգացմանը, կանոնավոր շարժվելուն ու շուրջը գտնվող ա-

ուարկաները ճանաչելուն: Միաժամանակ պիտի հոգ տանել և և այն բանի մասին, վոր մանուկն այս բոլորը սովորի առանց վրասովելու:

Կերակրել հարկավոր և կանոնավոր, վոր սովորուլթ դառնա միշտ նույն ժամերին ուտելը, վորից թե մարսողութունը կանոնավոր կլինի, փորը չի ցավի, թե կերածից ավելի կշահվի. յերեխան այդ դեպքում հանգիստ կլինի և զուր տեղը կամակորութուն չի անի: Իսկ յեթե ժամանակին չկերակրենք և հենց վտտի վրա ձեռք ընկած պատառը բերանը դնենք, յերեխան անկանոնութուն կսովորի. բացի այդ՝ մարսողութունը կխանգարվի, ցավեր ու լուծ կառաջանան:

**Մաքրութունն ու կարգապահութունը կանոնավոր գաստիարակոլոլյան միջոցներ են.**

Յերբ մանկան շորերը թեև պարզ ու աժան կտորից, բայց մաքուր են և իր չափովն են կարած, այս ել նրա համար դաստիարակչական հանգամանք է: Մաքուր ու հարմար շորերում նա իրեն լավ է զգում. վոչ հուպ է տալիս շորը, և վոչ ել մարմինն է կեղտից քոր գալիս: Մանկան լացի ու ջղայնանալու պատճառներից մեկն ել սա յե:

Յերբ մանկան յերեսը, ձեռքերը, վիրը ամեն որ լվանանք, իսկ շաբաթը մի անգամ տանը

կամ բաղնիքում լողացնենք, նա մաքրութունն է սովորում, մարմինը քոր չի գալիս, վոջիւնները նրան չեն տանջում, թե գիշերն է լավ քնում, թե ցերեկն ուրախ ու զվարթ է, մորը լացով չի անհանգստացնում: Մաքրութունն անհրաժեշտ է առողջ լինելու համար, իսկ մարմնի մաշկի մաքրութունը նաև շնչելու համար. չե՞ վոր մենք մաշկի ծակոտիներով ել ենք շնչում, ուրեմն այդ ծակոտիները պետք է կեղտից ազատ լինեն:

**Պեճ է ուճազուրկուն գարձեկ նայել յերեխայի ցարժուկների վրա.**

Յերեխան շարունակ շարժվում է - կերակրելիս, հագցնելիս, լողացնելիս: Սկզբում մենք ենք նրան ոգնում, իսկ հետո ինքն է սովորում, թե ինչպես պետք է գլալը դեպի բերանը տանել, սապոնով ձեռքերը լվանալ, գուլպան կամ կոշիկը հագնել և այլն: Յերեխան սիրով է կատարում այս շարժումները և վորքան ավելի յե մեծանում, այնքան ավելի յե ձգտում ինքնուրույն շարժվելու, գործունյա լինելու: Ծնողները կամ նրան շրջապատող մեծերը պիտի տեղին ու ժամանակին ոգնության գան յերեխային, անհամբեր չըլինեն նրա հանդեպ ու անտեղի չբարկանան վրան, յերբ նրա շարժումները դեռ անկանոն են: Տեսնելով, վոր յերեխան զբաղմունք է

փնտուռւմ կամ վորևե շարժումները յե ձգտում,  
մեծերը պիտի նրան իր ուժերի համապա-  
խան զբաղմունք տան, միաժամանակ ուշադրու-  
թյուն դարձնելով և այն հանգամանքի վրա, վոր  
այդ թեթև աշխատանքը չվնասի նրան:

**Խաղի նշանակությունը յերեխայի համար**  
«աս մեծ ե. պե՛տ ե քաջալերել այն.

Յերեխան խաղում ե տաշեղներով, փայտի  
կտորներով, թղթի կտորներով, արկղիկներով:  
Սաղն անհրաժեշտ ու լուրջ զբաղմունք ե նրա  
համար: Մի՞թե քիչ ե պատահում, չերբ մեծերը  
բղավում են հանգիստ խաղացող յերեխայի վրա,  
թե՛ «ինչ ես շուրջը թափթփում, կեղտոտացնում  
ու մոզ խանգարում»: Հենց այդ մեծերն են  
խանգարում յերեխային, դես ու դեն քշում,  
վորի հետևանքով յերեխան ծլկում, աչքից հե-  
ռանում ե կամ սկսում ե լաց լինել, «չարու-  
թյուն անել» (ինչպես մեծերն են ասում): Ան-  
հրաժեշտ ե յերեխային մի փոքր տեղ, մի անկյուն  
տրամադրել խաղի համար և սովորեցնել նրան,  
վոր խաղը վերջացնելիս իր շուրջը թափթփված  
չթողնի, այլ ամեն ինչ հավաքի ու կարգի բերի:  
4-5 տարեկան յերեխան սիրով ե կատարում  
այդ և սրանով կարգապահության ե վարժվում:

**Խաղից յերեխան անցնում ե աշխատանքի,  
քողնում ե «չարությունը».**

Յերեխան տեսնում ե, թե ինչպես ե մայրը  
տան գործերով զբաղվում: Նա հետաքրքրվում ե  
և՛ ոջախով, և՛ ամաններով, և նրան կարելի յե  
վորևե թ թև աշխատանք տալ: Նա կուրախանա,  
վոր ինքն զբաղված ե և հավատ են ընծայում  
իրեն: Սրանով նա սովորույթ ե ձեռք բերում  
փոքրիկ աշխատանքներ կատարելու, որինակ՝  
շտկել անկողինը, բաժակ ու աման լվանալ, հա-  
տակից իրա իրերը հավաքել և այլն. բացի այդ  
նա զբաղված ե լինում և անկարգություններ չի  
անում: Այս ել ասենք, վոր խաղի և փոքրիկ  
աշխատանքների միջոցով յերեխան ավելի համա-  
չափ ու ճարպիկ շարժումներ յե ընտելանում և  
նոր ոգտակար սովորույթներ ձեռք բերում:

**Յերեխայի հետ խոսելու ժամանակ ել  
կարելի յե նրան գասխարակել.**

4-5 տարեկան յերեխան հետաքրքրվում ե  
մեծերի խոսակցությամբ, շատ հարցեր ե տալիս  
և ուզում ե, վոր իրեն ամեն ինչ բացատրեն:  
Յերբ մի բան ես պատմում նրան, հետաքրքրու-  
թյամբ լսում ե և ինքն ել սիրում ե պատմել:  
Այս բոլորի ընթացքում ել կարելի յե դաստիա-  
րակել յերեխային և ահա թե ինչպես. խոսիր



հետը հանգիստ, ուշադրութեամբ վերաբերվիր նրա հարցերին, մի հաջողի, մի բղավի վրան և անսիտ յերգեր ու վախ ազդող պատմութիւններ մի պատմի, տես, թե վնասն ուշիմ ու հարգանքով ե վերաբերվում ասածիդ, մանավանդ յերբ չես խաբում նրան, ճիշտն ես պատմում: Մակայն յերբ նրա հարցերին պատասխանելու փոխարեն կոպիտ կերպով ասես՝ օհնչ ես գլուխս տանում, ռադ չեղիր, կորիր», իհարկե ինքն ել կոպիտ կլինի, հարգանքով չի վերաբերվի քեզ: Ծնողները վոչ մի վայրկյան չպիտի մոռանան, վոր այդ տարիքի յերեխան կապկի պես ամեն ինչ ընդորինակում ե, և ինչ վոր այդ ժամանակ յուրացրեց, ամբողջ կյանքի ընթացքում կմնա, կարտահայտվի վորևէ կերպ:

Խոսելիս կանոնավոր լեզվով խոսի,  
վոչ քե նմանվիւր նրա մանկական  
լեզվին.

Յերեխայի լեզուն անկանոն ե, նա սխալներով ե խոսում ու պատմում: Ծնողները, հարձարվելով նրան, հաճախ իրենք ել են սխալներով խոսում (իբր թե նրա լեզվով): Բայց չե՞ վոր յերեխայի համար հեշտ բան չի կանոնավոր խոսել սովորելը. ինչպես վոր ուտելիս,

լվացվելիս և ընդհանրապես շարժումների մեջ նա աշխատում ե նմանվել, ընդորինակել մեծերին, այնպես ել խոսելիս: Վոչ թե աղավաղված, այլ կանոնավոր յեզու պիտի լսի, վոր ինքն ել կանոնավոր խոսի: Յերեխային դաստիարակելիս այս ել չպիտի մոռանանք:

Գրեուկն ու պասկերն ել են օտա ազգում  
յերեխայի վրա.

Գրեուկները, մանավանդ պատկերազարդ գրեուկները շատ են ազդում յերեխայի վրա: Այստեղ, իհարկե, նշանակութիւն ունի և գրքի, և նկարների բովանդակութիւնը: Յեթե փոքր հասակից կարողացանք յերեխայի մեջ սեր ու հետաքրքրութիւն արթնացնել դեպի գիրքն ու պատկերները, ամբողջ կյանքի ընթացքում այդ սերն ու հետաքրքրութիւնը կմնա: Յեթե նա գրագետ ե դառնում ու սկսում ե գրքեր կարդալ, վերջիններիս նշանակութիւնը նրա համար ավելի ակնհայտ ե. գիրքը թե ուրախութիւն, թե ծիծաղ, թե դասերից հետո հանգիստ և թե դեպի լուրջ ինդիւրները հետաքրքրութիւն ե առաջ բերում նրա մեջ: Յերբ ծնողներն անգրագետ են, անկարող են պատմել ու բացատրել այն ամենը, ինչ յերեխային հետաքրքրում ե, գրեուկներից

կարող են շատ բան իմանալ և նկարներն ել  
ցույց տալ: Մանավանդ գյուղի յերեխաների  
համար պատկերազարդ գրքերն ուղղակի անհրա-  
ժեշտ են. չե՞ վոր նրանք քաղաքի յերեխայի պես  
չեն, ավելի քիչ բան են տեսնում. անա ծնող-  
ները հետ կկարդան, կամ կլսեն միասին գրքում  
ասածը, միասին կնայեն նկարները և ավելի  
սիրով կլինեն և միաժամանակ նույն խնդիր-  
սերով կհետաքրքրվեն: Թե մեծերի և թե փոք-  
րերի համար այնքան հետաքրքիր խնդիրներ կան.  
մի՞թե հետաքրքիր չե, թե ինչպես են տոնում  
հեղափոխական տոները, ինչո՞վ են զբաղվում  
հոկտեմբերիկները, ինչ կազմութիւնն ունեն և  
ինչպես են շարժվում ողանավերը, ինչպես ե  
աշխատում փոստը, ինչպես են պատրաստում  
շաքարը, ինչպես են ապրում և կրթվում յերե-  
խաները մանկապարտեզներում... կյանքը շատ  
հետաքրքիր կողմեր ունի թե փոքրերի, թե մե-  
ծերի համար:

Յերեխաների հետ հաս ու սիրով ապրող  
ծնողներն ուժեղ ազդեցութիւն  
ունեն նրանց վրա.

Վոր ծնողն ե կարողանում լավ ազդեցու-  
թիւնն ունենալ իր յերեխայի վրա և ճիշտ  
ուղիով տանել նրա կրթութիւնը: Պարզ ե, վոր

մանկան կյանքին մոտ կանգնած ծնողը վորն  
իր ուշադիր և սիրալիր վերաբերմունքով ողնում  
ե նրան թե սճելու և թե ապրելու տեսակետից:  
Ծնողն ինքն ել պիտի զսպի իր վատ հակում-  
ները, վորպէզի յերեխայի համար լավ որինակ  
դառնա: Այլ ընկերական և սիրով կյանքին ըն-  
տանիքում վարժվելուց հետո յերեխան թե իր  
հասակակիցների հետ, թե դպրոցում, թե գյու-  
ղում, թե գործարանում աշխատելիս, բլորի  
նկատմամբ ընկերասեր կլինի:

Ծնողների և յերեխաների հաշտ ու խաղաղ  
կյանքը կրթութիւնն համար անհրաժեշտ ե նաև  
այն տեսակետից վոր նշարդեր գրգռող մշտական  
կռիվներ այստեղ տեղի չեն ունենում: Յերբ  
տանը հաճախ կռիվներ են տեղի ունենում, և  
յերեխայի հետ անսիրալիր են լինում, նա  
ձլկում, փախչում ե փողոց և իր ժամանակի  
մեծ մասն այնտեղ ե անցկացնում: Այսպիսով  
նա շատ վաղ զրկվում ե հսկողութիւնից, վոր  
անհրաժեշտ ե նրա կրթութիւնն համար: Չե՞ վոր  
փողոցում նա լավ ու վատ ընկեր, լավ ու վատ  
կամ վնասակար խաղ դեռ չի տարբերում և այս-  
պիսով կարող ե հեշտութիւնը դեպի անկարգու-  
թիւնը և սրիկայութիւնը տանող ճան սպարնը  
բռնել: Մեծերի հսկողութիւնն ել անախորժ  
չպիտի լինի նրա համար: Ուրեմն ծնողները պի-

տի աշխատեն, վոր մշտական հսկ ղուլթունն ել  
ախորժելի ու հետաքրքիր գբադմունքների և  
խաղերի հետ կապված լինի:

**Պատիժները վճատում եմ յերեսային.**

Ծնողներից շատերը կարծում են, թե կըր-  
թելու գործում պատիժներն ոգնում են, նրանք  
հնարագետ են պատիժների գանազան ձևերի  
նկատմամբ. անկյունում կանգնեցնում են յերե-  
խային, ճաշից զրկում, խփում, ծեծում. . այս  
պատիժները վոչ թե ոգուտ, այլ վլաս են պատ-  
ճառում յերեսային և՛ ֆիզիկապես և՛ հոգեպես.  
Ծեծը հաճախ հաշմանդամ ե դարձնում յերեսա-  
յին կամ անջնջելի ծանր վիրավորանք հասցնում  
նրա ինքնասիրության, վերջի վերջո ինքն ել ե  
սովորում ծեծել՝ ում կարող ե:

Բացի այդ, ծեծից կամ ուրիշ պատիժներից  
վախենալով, յերեսան ստում ե, կամ նրա մեջ  
ատելութուն ու չարութուն ե առաջ գալիս:  
Ծանր պատժից հետո նա իր սրտում վոխ ե  
պահում: Հաճախ իսկի նա մեղավոր չե այն վար-  
մունքների համար, վորոնց պատճառով պատ-  
ժում են նրան. Որինակ, մի 6 տարեկան յերե-  
խայի ուղարկել ես շշով նավթ բերի, սայթաքել  
ու շիշը կտրել ե: Ծեծում ես նրան, բայց մի-

թե մեղավոր ! նա: Վարտիքը պատռել ե, աղ-  
տոտել ե, թա: և արել, մի բան ե կորցրել,  
ինարկե լավ չի, բայց միթե այսպիսի դեպքերում  
պիտի նրան պատժել: Գուցե յերեսան դեռ չի  
հասկանում, կամ նրան կարգ ու կանոնի չեն  
վարժեցրել կամ ուղղակի խաղով տարվել ե: Ա-  
վելի վատն ել ե պատահում - յերեսան կամա-  
կորութուն ե անում, համառում ե կամ մի  
բանից վախենում - տեսար պատժեցին: Այս ար-  
դեն անթուլատրելի յե Միշտ մի պատճառ ե  
լինում, վոր նա կաւավոր և կամ վախենում ե:  
Մեծ մասամբ այս յերեսութիւնների պատճառը յե-  
րեսայի կյանքի կանոնավոր լինելու. պակասն ե.  
կամ շատ հոգնած ե նա, կամ կուշտ չե, կամ  
հիվանդ — պատիժն ել ավելի ե փչացնում  
գործը:

Մի ուրիշ բան ել ե հաճախ պատահում. բո-  
լորս ել գիտենք, վոր ծնողներն իրենց դարդ ու  
գավի, անհաշոդութունների «ինադը» յերեսա-  
ներին ծեծելով են հանում: Ծիշտ ե, վոր դաս-  
տիարակելը ծանր գործ ե, և իրեն զօպելն ել  
հեշտ չի, բայց միթե պարզ չի, վոր ծեծն ու  
պատիժները վոչվորի դեռ չեն դաստիարակել,  
այլ միայն վլաս են հասցրել: Մինչև անգամ  
յերբ յերեսաներն չեն ծեծում, բայց նւանք  
ականատես են լինում, թե ինչպես են ծնողները

1004  
1691



կովում, իրար խփում են, իրանք ել անպայման  
նույնն են անում, և այդ ծանր տպավորությունը  
ընդմիշտ մնում է նրանց հիշողության մեջ:

ՅԵՐԵՒԱՅԻՑ ՀԱԵՏ Ե ԱԵԿ ՇԱՏ ՓԱՂԱՓԵՍ,  
ԱԵԿ Ե՛ ԴԱԺՅՈՒ ԻԻՆԵՍ ԻԵՏԸ. ԱԻՏԻ  
ԽԱՎԱՍԱՐԱԿԵՐՈ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԸ  
ԳՈՒՅԳ ՑԱՍ.

Ասացինք, վոր մեղմ ու սիրալիր պիտի լինել  
մանկան հետ, բայց այդ չի նշանակում՝ շարու-  
նակ գրկել ու համբուրել նրան: Ձանձրալի յե  
այդ յերեխայի համար և մանավանդ փասակար  
ե այ՛ դեպքում, չերբ ծնողները մերթ համբու-  
րում են նրան, մերթ գրգռվում նրա դեմ, վրան  
գոռում: Ծեծում: Մեծի հանդեպ ել այսպես  
անհավասարակերտ վարվես, ելի ծանր է, ուր  
մնաց թե յերեխայի համար: Վերջինս արդեն չը  
գիտի, թե ինչ դեպքում պիտի փաղաքշեն իրեն,  
կամ յերբ հայհոյեն. սրանից ինքն ել է անհան-  
դիստ դառնում:

Ճիշտ է, կյանքի պայմանները չերբեմն  
ծանր են լինում, և դժվար է ամեն անգամ հան-  
գիստ ու հավասարակերտ վերաբերմունք ցույց  
տալ դեպի յերեխաները, բայց ելի ծնողները  
պիտի հետևեն ու զսպեն իրենց, վոր յերեխա-

ները չվախենան, այլ հավատ ընծայեն նրանց  
ու չիրես չառնեն:

Մեծերը հաճախ ձգտում են նույն տեսակ  
բավականութուններ պատճառել յերեխաներին,  
ինչ բավականութուն վոր իրենք են ստանում,  
որինակ՝ շատ քաղցրեղեն ուտեցնել, միասին  
հյւր գնալ, կինո, թատրոն գնալ, զբոսանքների  
տանել: Այս բոլորը կարելի չե անել, բայց չա-  
փավոր: Ճիշտ է, կարելի չե, նույնիսկ հարկա-  
վոր է փոքրիկին քաղցրեղեն տալ, բայց ժամա  
նակին, վոր ախորժակը չփչչայնի ճաշից առաջ.  
կամ չպիտի թույլ տալ, վոր իր հավաքած կո-  
պեկներով փողոցի ծախողներից փողոտ ու կեղ-  
տոտ կանֆետ կամ թխվածքներ գնի ու ուտի:  
Ամեն մի սգտակար զվարճութուն ու բավակա-  
նութուն, յիթե չափ ու սահմանից դուրս գա,  
փաս կրբերի յերեխային: Մեկ ել տեսար՝ ծնողը  
6-7 տարեկան յերեխային հյուր տարավ իր  
հետ: Աղմուկը, չափից ավելի ուտելիքը, մեծերի  
խոսակցութունները - այս բոլորը հոգնեցնում են  
յերեխային և քիչ բավականութուն են պատճա-  
ռում նրան. հաճախ յերեխան բղավոցով ու լա-  
ցով է վերադառնում հյուրասիրութունից, ու շ  
պառկում, վատ ել քն էմ: Իր կանոնավոր կյան-  
քից շեղվելով, յիթե, իհարկե, հաճախ են նրան  
հյուր տանում, յերեխան սովորում է անկարգու-

թիան. նա վոչ ուզում է ժամանակին քնել, վոչ էլ ժամանակին ուտել:

Հինգ տարեկան յերեխան կարիք է զգում ավելի իր հասակակիցների հետ լինելու, բան մեծերի հետ Այդ տարիքում նա սիրում է ուրիշ յերեխաների հետ խաղալ, միասին աշխատել: Կարիք չկա մեծերի մոտ հյուր տանելու. կարելի չէ հավաքել կամ իր, կամ հարևան բակի յերեխաներին, մի մաքուր անկյուն ընտրել և խաղալ. յեթե ցուրտ է դուրսը, կարելի չէ մեկն ու մեկի սենյակում խաղալ հասակակիցների հետ:

Ուրախութիւնն ու զվարճութիւնն  
անհրաժեշտ են յերեխայի համար.

Առողջ և ուրախ յերեխայից լավ ինչ կարող է լինել: Մենք մեծերս ուրախ ու գոհ ենք մեր հասակակիցների շրջանում. ապա վորքան ավելի գոհ ու յերջանիկ է փոքրիկն իր ընկերների հետ լինելիս: Վորքան ավելի չէ մեծանում, այնքան ավելի չէ զգում նա իր հասակակիցների հետ միասին աշխատելու, վորևէ բան հնարելու պահանջը: Մանկական խմբակը սովորում է յորջ գործեր կատարել, միմյանց ոգնութիւն գալ, ճարպիկ ու շնորհքով աշխատել, մի բան շինել:

Լավ դիտեցեք մանուկներին և կտեսնեք, վոր ասածներս ճիշտ են:

Յերեխայից յերեխաների օրացն է  
հարկավոր.

Մեծերը հաճախ իսկի ժամանակ էլ չեն ունենում յերեխայի հետ խաղալու կամ վորևէ գործում ոգնելու նրան: Բացի այդ, կարծես զիջողութիւն են անում նրանց. չերբ խաղում են հետները: Ուրիշ բան է հասակակիցների հետ. աչտեղ նրանք հավասար են: Ծնողները պիտի հսկեն ու իմանան, թե իրենց յերեխան ում հետ է խաղում, ինչ է խաղում, և վորքան հնարավոր է կովից ու անկարգութիւնից հեռու պահեն նրանց: Յեթե բան է՝ չարութիւնն ու կոխիվ է պատահել, ծնողները պիտի հետաքրքրվեն, թե բանն ինչ է, զուր տեղը սրան-նրան չմեղադրեն: Փոքրիկները զեռ անզիաակից են, և յերբեմն կոխիվ ու անկարգութիւնն անխուսափելի յեն. ուշադիր լինելով զեպի իր յերեխայի ընկերները, ծնողը միայն իր յերեխաների հավատն ու սերն է կրկնապատկում զեպ ինքը:

Յերբ գլուղում փոքրիկները բակում կամ փողոցում խաղում են, անհրաժեշտ է, վոր ծնողներից մեկն ու մեկը հսկի, հետևի նրանց: Մանավանդ շատ փոքրիկները նկատմամբ պիտի

զգուշ լինել չթողնել, վոր փոշու մեջ թափալվեն, կամ մենակ վազեն դեպի գետը կամ վորևեք վտանգավոր խաղ խաղան: Չմեռը վտառքերիկ չվազեն փողոց խաղալու, այլ միասին խրճիթ գան, յերբեմն ել պատմվածք լսեն:

ԿԻՆՈ յեվ քառոց կարելի յե օսնել  
փոքրիկներին, բայց միայն մօց-  
կակաց ցերկայացումներին.

Միքիչ ել կինոյի և թատրոնի մասին: Փորրիկներին չի կարելի տանել մեծերի համար տրվող նկարներին ու ներկայացումներին: Յերեխաները մեծապես փրսավում են դրանից, յերկար ե տևում, յերեխաները հոգնում են, իսկ բովանդակութունը հաճախ նրանց վսխ ու սարսափ ե պատճառում: Յեթե նույնիսկ չհասկանան ել, հոգնում են:

Պատահում ե նաև, վոր 7—8 տարեկանն առանձնապես գրավվելով կինո-նկարներով անվերջ հաճախում և այնքան վաղ ծանոթանում ե կյանքի զանազան խնդիրների, վոր ինքն ել սկսում ե նույնը փորձել, — ահա և գողության, և մանր առևտրի յե դիմում, և սեռական վաղաժամ զգացումներ են արթնանում նրա մեջ: Պարզ ե, թե վորքան կորստաբեր են այս յերեվույթները փորրիկի համար:

Սակայն պատահում են յերբեմն մանկական շատ հետաքրքրական նկարներ, ներկայացումներ, և հենց իրենք յերեխաներն ել սիրում են ներկայացումներ սարքել: Նրանց այնպիսի նկարների պիտի տանել, վորտեղ յերեխաների կյանքն ե ցուցադրվում, կամ յերկաթուղու գնացքներ, շոգենավեր, անձանոթ յերկրներ և ընդհանրապես նոր գիտելիքներ տվող կինոներ պետք ե տանել:

Զբոսաճեցերի մասին.

Զբոսանքների մասին ել միքանի խոսք ասենք: Մանկական կյանքի ամենալուրջ կողմն են կազմում սրանք. նախ՝ վոր զբոսանքի ժամանակ յերեխան ոգտվում ե արևից և ոգից, և վորջան ավելի յե ոգտվում, այնքան ավելի առողջ ե լինում նա: Յերկրորդ՝ դուրսն զբոսնելիս՝ նրա համար շատ հետաքրքիր բաներ կան՝ լսանութների ցուցափեղկեր, դաշտ, անտառ, ջրաղաց, կայարան, գետ և այլն. այս բոլորը տեսնում ե նա և մեծի բացատրութուններն ել լսում: Յերրորդ՝ զբոսանքի ժամանակ յերեխան ազատ ե իր շարժումների նկատմամբ: Զմոռանանք այս ամենը և յեթե վոչ հաճախ, գոնե յերբեմն զբոսանքներ կազմակերպենք յերեխա-

ների համար: Յեթե հաջողի մեզ մեծ քույրերին ու յեղբայրներին ել մասնակից անել այս աշխատանքին, այս ել մեծ նշանակութիւն կունենա նրանց համար:

Այս բոլոր խորհուրդները լսելով՝ կարող ե պատահել, վոր ծնողներն առարկեն, թե իրենք գործին անտեղյակ են, դժվար ե իրագործել այս բոլորը, թե ժամանակ չեն ունենա թե տան գործերին հասնելու և թե յերեխաներին զբոսանքի տանելու ու նրանց հսկելու, թե, վերջապես, առանց ծեծի ու պատժի դժվար ե յերեխաներին սաստել և ալլն և ալլն: Այսպիսի ծնողին անա թե ինչ կպատասխանենք: — Յեթե դու արդեն հասկացել ու համոզվել ես, վոր վաղ մանկութիւնից ե հարկավոր փոքրիկին դաստիարակել, կարող ես կամաց-կամաց սովորել նաև, թե ինչպես պետք ե դաստիարակել նուչն այդ փոքրիկին: Չե՞ վոր թե անտեսութիւն, թե այլ խնդիրների նկատմամբ ինչ վոր չգիտես, հարցնում, սովորում ես: Որինակ, գյուղում խոզ, հորթ կամ քուռակ մեծացնելիս, շոր կարելիս, գուլպա գործելիս սրան-նրան դիմում, խորհուրդ ես հարցնում, կամ լավ իմացողի աշխատանքն ես գիտում, կամ չեթե զբազետ ես, կարդում ես, զրբբրից իմանում: Հո ծնվելուց գիտուն չես լինում, աստիճանա-

բար ես սովորում ամեն ինչ. բա յերեխաներին արհեստի չե՞ս տալիս, կամ դպրոց չե՞ս ուղարկում սովորելու: Գյուղում յերբեմն ամբողջ համայնքն ե գրքեր բերել տալիս, զբազետը կարդում ե, մյուսները լսում են: Պատահում ե, վոր գյուղատնտեսական գիտելիքների և գործերի համար համայնքը գիտուն գյուղատնտես ել ե բերել տալիս, վոր նրանից բան սովորի: Յեթե այս բոլորը սովորելուց ոգուտ ունես, դաստիարակչական գործը սովորելուց նուչնպես ոգուտ ունես: Նախ՝ առողջ ու հանգիստ յերեխան ալելի քիչ ժամանակ ու ծախք ե պահանջում, յերկրորդ՝ յեթե վաղ մանկութիւնից կրթես նրան, անկարգ ու սրիկա չի լինի հետագայում: Այն յերեխան, վորին կանոնավոր ես մեծացրել, ավելի հեշտ ե սովորում. — թե գյուղումն ե — գյուղի գործերն ե հեշտ սովորում, թե քաղաքումն ե — գործարանային կամ արհեստանոցի գործը, կամ ուսուցչութիւն և կամ ուրիշ աշխատանքներն ե հեշտ յուրացնում:

Մի անգամ ընդմիշտ չեթե համոզվես, վոր կրթելու գործն ել կարելի յե սովորել, ուղիղ ճանապարհն ել կգտնես: Այժմ Խորհրդային Ռուսաստանում և ուրիշ յերկրներում ամսագրեր ու մատչելի գրքեր են հրատարակվում. (անա մեզնում՝ Խորհրդային Հայաստանում ել

ենք սկսել այդ գործը): Այս գրքերը ձեր բոլոր հարցերին պիտի պատասխանեն, նաև դաստիարակչական գործին վերաբերյալ հարցերին, գոնե ամենաեզակապես հարցերին: Ովքեր գրագետ են, իրենք կկարդան, հակառակ դեպքում կհավաքվեն ու կլսեն ուրիշի կարդացածը, յերեխաների կյանքը կանոնավոր հիմքերի վրա դնելու համար:

Այժմ համարյա ամեն քաղաքում մանկապարտեզ կա, իսկ գյուղերում դպրոց, կամ ամառը՝ մանկական հրապարակ: Կարելի չէ գնալ, խորհրդակցել, դիտել ու տեսնել թե ինչպես են աշխատել յերեխաներին կրթում: Յեթե մանկապարտեզ չունեք, կամ ձեր յերեխաները մանկապարտեզ չեն ընդունվել, աշխատեցեք ինքներդ մանկապարտեզ բաց անել: Միահամուռ ուժերով միշտ կարող եք ձեր յերեխաների կյանքը կարգավորել: Գոնե այսբանը կարելի չէ անել, վոր մայրերից մեկն ու մեկը կամ սենյակում կամ բակում հինգ յերեխայի մի մաքուր անկյուն հատկացնի և այս փոքրիկ խմբակի խաղերին ու աշխատանքներին հսկի: Յեթե գյուղում ամառը մանկական հրապարակ է բացվել, ապա պետք է աշխատել, վոր ձմեռը մանկապարտեզի վերածվի:

Մայրերը պետք է ընդհանուր ուժերով հոգան, վորպեսզի բանվորական ակումբում կամ խրճիթ-ընթերցարանում մի անկյուն հատկացվի յերեխաներին, վորտեղ նրանք հանգիստ ու մաքուր աշխատել կարողանան, մինչդեռ մայրը կկարգա ընթերցարանում կամ զբաղված կլինի վորևէ հասարակական գործով, ինչպես, որինակ, պատգամավորուհի մայրը:


Խալի համար հանգիստ անկյուն ունենալով, յերեխան այլևս մորը չի անհանգստացնի: Այս դեպքում մայրն ավելի ազատ կլինի, կհանգըստանա և ավելի հնարավորություն կունենա յերեխայի կրթության մասին մտածելու: Կամաց-կամաց յերեխայի կյանքը կկանոնավորվի, այսոր մայրն առանձին անկողին կպատրաստի նրա համար, վաղը՝ հարժար ու սիրուն շոր, հետո մաքրություն կսովորեցնի, վոր ուտելուց առաջ միշտ ձեռքերը լվա, փոշու մեջ չթավալվի, ժամանակին ուտի, ժամանակին ընի:

Ավելի դժվար հարցերի նկատմամբ, որինակ՝ խաղերի, յերեխաների աշխատանքների, կամակորության և համառության մասին, վախի ու պատիժների, գրքույկների և զրույցների մասին պետք է շատ կարգալ կամ լսել ուրիշի կարդացածն և փորձված ծնողների հետ խորհրդակցել, վորոնց յերեխաները մանկապարտեզ



են հաճախում: Ամենազխավորն այն է, վոր  
յեթե մի մոր համար կամ մի ընտանիքում  
դժվար է յերեխայի կյանքը կարգավորել, ապա  
ուրեմն պետք է համախմբվել և միասին տանել  
այդ աշխատանքը:





« Ազգային գրադարան



NL0228052



ԳԻՆԸ 10 ԿՈՊ.

45. 277